ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ Ն 74 -Ա

«28» ՓԵՏՐՎԱՐԻ 2024Թ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՌԻՆԴԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի ՏՆՕՐԵՆ ԱՇՈՏ ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 216-րդ հոդվածի, 218-րդ հոդվածի 1-ին մասի, 220-րդ հոդվածի 1-ին մասի, 222-րդ հոդվածի, 223-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 224-րդ և 226-րդ հոդվածների, 227-րդ հոդվածի 2-րդ մասի, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի, «Տարածքային կառավարման մասին» օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի, 13-րդ հոդվածի 1-մասի 4-րդ կետի, «Հանրակրթության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 20-րդ մասի դրույթներով, հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Ռինդի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի կանոնադրության 47-րդ կետի 10-րդ և 13-րդ ենթակետերը, 53-րդ կետը, մարզի հանրակրթական ուսումնական հաստատություններում մշտադիտարկումներ իրականացնելու նպատակով ստեղծված աշխատանքային խմբի կողմից 2024 թվականի փետրվարի 14-ին «Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Ռինդի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ կատարված աշխատանքային այցի մասին զեկուցագիրը և անհիմն համարելով ՀՀ Վայոց ձորի մարզպետի 2024 թվականի փետրվարի 22-ի թիվ 01/15/1331-2024 գրության հիման վրա Ա. Թադևոսյանի 2024 թվականի փետրվարի 23-ի գրավոր բացատրությունը (մուտքի համար 1858)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Աշխատանքային պարտականությունները ոչ պատշաճ կատարելու՝ հաստատության սանիտարահիգիենիկ անբավարար վիճակի համար «Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Ռինդի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրեն Աշոտ Թադևոսյանին ենթարկել կարգապահական պատասխանատվության՝ կիրառելով «նկատողություն» կարգապահական տույժը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ա. Թադևոսյանին ծանուցելու հաջորդող օրվանից:

3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ ուժի մեջ մտնելուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում:

Recoverable Signature

X

Signed by: KOLYA MIKAELYAN 3507670100

Կ. ՄԻՔԱԵԼՅԱՆ

Ք. Եղեգնաձոր